ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2023թ. թիվ 598-Ա

ՓԻՐՈՒԶԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հաշվի առնելով Փ.Հայրապետյանի՝ 23.10.2023թ. բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի 21)-րդ կետի պահանջները չպահպանելու, այն է՝ դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը չապահովելու համար, «ՀՀ Լոռու մարզի Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Փիրուզա Հայրապետյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Գրիգորյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

25/10/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 25
ք.Վանաձոր